

ԳՐԱՆՈՍՈՒԹՅՈՒՆ

Հրաչուհի Ալբերտի Ղազարյանի

«Ռեսպիբլիկանոս սինցիտիալ և գրիպի վիրուսների կլինիկական նշանակությունը
շնչական վարակի կապակցությամբ հոսպիտալացված մինչև 5 տարեկան
երեխաների շրջանում»

թեմայով ատենախոսությանը, ներկայացված բժշկական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ԺԴ.00.06 «Մանկաբուժություն» մասնագիտությամբ

Ատենախոսական աշխատանքը նվիրված է բժշկության մեջ կարևոր և արդիական խնդրին՝ սուր շնչական վարակներին (ՄՇՎ), որոնք հանդիսանում են մանկական հիվանդացության և մահացության հիմնական պատճառներից մեկը աշխարհում: Ընդվորում, կապված տարածաշրջանի և երկրի զարգացվածության աստիճանից, վերջիններիս հաճախականությունը փոխվում է:

Հայտնի է նաև, որ հատկապես վաղ մանկական տարիքի (մինչև հինգ տարեկան) երեխաների շրջանում ՄՇՎ ամենահաճախ հանդիպող հիվանդություններից են, իսկ նրանց պատճառական կազմում առավել կարևոր են ռեսպիբլանոս սինցիտիալ վիրուսը (ՌՍՎ) և գրիպի վիրուսը (ԳՎ): Ընդորում, ՌՍՎ համարվում է մինչև 2 տարեկան երեխաների շնչական վիրուսային վարակների ամենակարևոր էթիոլոգիական գործոնը, 30-70% դեպքերում ընթանալով թոքաբորբով և/կամ բրոնխիտով, սեպսիսանման հիվանդությամբ և այլ բարդություններով, երբ հաճախ առաջանում է հոսպիտալացման կարիք, այդ թվում վերակենդանացման բաժանմունք:

Վաղ մանկական տարիքում ծանր կարող է ընթանալ նաև ԳՎ-ով հարուցված վարակը բարդանալով բազմաօրգանային ախտահարումով և/կամ երկրորդային մանրէային վարակի միացումով, երբ այն դժվար է տարբերակել տենդով ուղեկցվող այլ հիվանդություններից: Ուստի միայն կլինիկական ախտանիշներով ՄՇՀ-ի էթիոլոգիական ախտորոշումը հաճախ դժվար է իրականացնել, ինչը հատկապես սրում է այս խնդիրը ոչ միայն առողջապահական, այլ նաև սոցիալ-տնտեսական առումով:

Այս առումով ՌՍՎ/ԳՎ վարակների ժամանակին և հստակ ախտորոշումը, դարձել է արդիական խնդիր, քանի որ, դա, մասնավորապես, հնարավորություն կտա խուսափել հակաբիոտիկների անհիմն նշանակումից, ինչը խիստ կարևոր է տարեց-տարի աճող հակաբիոտիկակայուն շտամների առաջացումը կանխելու համար: Իսկ վիրուսային վարակների դեպքում հստակ հարուցչի ճշտորոշումը կարևոր է նաև համաճարակաբանական տեսանկյուններից: Այս ամենը ընդգծում է զարգացող երկրներում, այդ թվում Հայաստանում, մանկական բուժօգնության ՌՍՎ և ԳՎ հայտնաբերող հակաճնային արագ թեստերով հիվանդների լաբորատոր հետազոտման կարևորությունը, նրանց վարումը ու բուժումը բարելավելու նպատակով: Վերոնշյալի կապակցությամբ իրականացված աշխատանքը արդիական է և ժամանակին, պարունակում է մի շարք նոր դրույթներ:

Առաջին անգամ Հայաստանում ուսումնասիրվել է ՌՍՎ-ի և ԳՎ-ի մասնաբաժինը սուր շնչական հիվանդությունների էթիոլոգիական կառուցվածքում:

Հեղինակը, կիրառելով ՌՄՎ և ԳՎ հայտնաբերող հակաճնային արագ թեստերը ՄՇՀ-ով հոսալիտալացված վաղ տարիքի երեխաների շրջանում, ցույց է տվել ՌՄ և ԳՎ-յին հարուցիչներով պայմանավորված հիվանդության բարձր տեսակարար կշիռը: «Արաբկիր» ԲՀ-ԵԴԱԻ ներդրված հակաճնային արագ թեստերի շնորհիվ տրվել է նշված վիրուսային հիվանդությունների բնութագիրը, նրանց կլինիկա-ռենտգենաբանական տարբերակիչ ախտորոշման չափանիշները վաղ մանկական տարիքի երեխաների մոտ, որը կարևոր նշանակություն ունի առողջապահության ասպարեզում ինչպես ամբուլատոր օղակում, այնպես էլ հիվանդանոցներում:

Միաժամանակ ցույց է տրվել, որ այն դեպքերում, երբ PCR մեթոդը մատչելի չէ, հակաճնային արագ թեստերի իրականացումը կարևոր է հիվանդների տրիաժի կազմակերպման, հակաբիոտիկների ռացիոնալ օգտագործման, լաբորատոր և գործիքային մեթոդների նպատակային կիրառման համար: Այս ամենը որոշում է ներկայացված աշխատանքի բացի տեսական, նաև գործնական նշանակությունը:

Աշխատանքի նպատակն է բացահայտել մինչև 5 տարեկան, սուր շնչական վարակի ախտանիշներով հոսալիտալացված երեխաների շրջանում ՌՄՎ և ԳՎ-ի հանդիպման հաճախականությունը, տալ նշված վարակների կլինիկա-լաբորատոր նկարագիրը և հիմնավորել վարումը: Նպատակից բխող խնդիրները հստակ ձևակերպված են:

Հետազոտությունում ընգրկվել է հիվանդների բավականին ծավալուն խումբ՝ մինչև 5 տարեկան 915 երեխա, որոնց միջին տարիքը կազմում է 18.8 ամիս և որոնք մեկ ամբողջ ձմեռային սեզոնի ընթացքում՝ 2013թ. նոյեմբերից մինչև 2014թ. ապրիլ ամիսը, շնչական վարակի կապակցությամբ, հոսալիտալացվել էին «Արաբկիր» ԲՀ-ԵԴԱԻ: Ընդորում ներառված երեխաներից 47.9% կազմել են մինչև 1 տարեկան երեխաները, ինչը մեկ անգամ ևս վկայում է տվյալ տարիքային խմբում ՄՇՀ-ի՝ հիվանդացության կարևոր պատճառ լինելու մասին:

Հեղինակը հստակ հիմնավորել է հիվանդների հետազոտության մեջ ընդգրկման և բացառման չափանիշները, հիմք ընդունելով նրանց համար նախապես մշակված հատուկ հարցաշարը: Ռետրոսպեկտիվ ուսումնասիրվել են նաև «Արաբկիր» ԲՀ-ԵԴԱԻ հիվանդների հիվանդության պատմագրերը: Պացիենտները ենթարկվել են մանրակրկիտ կլինիկական, լաբորատոր և անհրաժեշտության դեպքում նաև գործիքային քննության:

Վիրուսների առկայությունը բոլոր հիվանդներից վերցված քիթ-ըմպանային քսուքում որոշվել է «OSOM» արագ հակաճնային թեստերի կիրառմամբ, որոնք ունեն բարձր զգայնություն և սպեցիֆիկություն, և հետազոտության ընթացքում տրամադրվել էին Ցյուրիխի մանկական համալսարանական հիվանդանոցի կողմից: Այսպիսով, աշխատանքում օգտագործված են հետազոտման ժամանակակից մեթոդներ, որոնք համապատասխանում են դրված խնդիրներին: Հավաքագրված տվյալները վերլուծվել են բժշկակենսաբանական հետազոտությունների համար խորհուրդ տրվող ժամանակակից վարիացիոն վիճակագրության մեթոդներով:

Աշխատանքը ընդգրկում է երեք գլուխ (Գրականության վերլուծություն, Հետազոտության նյութ և մեթոդներ, Հետազոտության արդյունքներ 9

ենթազույսներով), արդյունքների քննարկում, եզրակացություն, գործնական առաջարկներ, հավելված, 159 միջազգային աղբյուր ընդգրկող գրականության ցանկ, ներառելով նաև աղյուսակներ և նկարներ: Ատենախոսությունը կազմաված և շարադրված է գրագետ և հստակ: Թեմայով հրատարակված են 9 գիտական աշխատանք, այդ թվում 5 հոդված:

Ներածության մեջ հստակ հիմնավորված է ուսումնասիրության արդիականությունը, ձևակերպված են հիմնական նպատակն ու խնդիրները:

Գրականության վերլուծությունում հեղինակը բնութագրում է Ռեսպիբատոր սինցիտիալ և Գրիպի վիրուսները և նրանցով հարուցված շնչական վարակները, մանրամասն վերլուծելով վերջիններիս սեզոնային հիվանդացության և փոխանցման, ախտածնության և կլինիկական դրսևորման ասպեկտները: Վերլուծված են նաև երկրորդային մանրէային վարակի միացման, բարդությունների վերաբերյալ ժամանակակից տվյալները: Հեղինակը իրավացիորեն շեշտում է վիրուսային շնչական վարակների ժամանակակից լաբորատոր ախտորոշման մոտեցումների զգալի փոփոխությունները և համարժեք թերապիայի կարևորությունը: Ակնարկը կազմված է քննադատորեն, օգտագործելով վերջին տարիների տեղեկատվությունը և ընդգրկում է խնդրի բոլոր ասպեկտները, վկայելով հեղինակի կողմից վերջինիս էության լավ իմացությունը:

3-րդ գլխում ներկայացնում է իր սեփական հետազոտության արդյունքները: Նա պարզել է, որ 1 ամսականից մինչև 5 տարեկան երեխաների շնչական վարակներով պայմանավորված հոսպիտալացում պահանջող դեպքերի 44%-ը հարուցվել էին ռեսպիբատոր սինցիտիալ (29.40%) և գրիպի (13.55%) վիրուսներով: Նշված արդյունքները վկայում են, որ Հայաստանում ՌՄՎ և ԳՎ հարուցված շնչական վարակների դերը հոսպիտալացված երեխաների շրջանում նույնպես մեծ է: Ընդորում, ՌՄՎ վարակի դեպքում, ի տարբերություն ԳՎ-ի, այն առավել ծանր է ընթացել և ավելի հաճախ է զարգացել մինչև մեկ տարեկան երեխաների մոտ, հաճախ ուղեկցվելով ծանր բրոնխային օբստրուկցիայի/բրոնխոլիտի դրսևորումներով, դեսատուրացիայով, վերակենդանացման բաժանմունք հոսպիտալացման անհրաժեշտությամբ:

Հեղինակը ցույց է տվել, որ ԳՎ հարուցված վարակը կլինիկորեն դրսևորվել է որպես տենդով ընթացող, սակայն առանց ծանր ընթացքի և չբարդացած ՄՇՀ-ն, իսկ վերակենդանացման բաժանմունք հոսպիտալացման անհրաժեշտությունը ԳՎ դրական և բացասական խմբերում չի տարբերվել:

Ուստի գործնական տեսկետից հեղինակը առաջարկել է ՄՇՀ-ի կապակցությամբ բժշկի դիմած հիվանդների մոտ բրոնխոլիտի/բրոնխային օբստրուկցիայի առկայությունը համարել ցուցում ՌՄՎ վարակի վերաբերյալ հետազոտություն իրականացնելու համար, իսկ տենդով, սակայն աղքատ շնչական ախտանիշներով ընթացող ՄՇՀ-նը դիտել ցուցում ԳՎ վարակի հետազոտության համար: Ներկայացված տվյալները կարևոր են և կլինիկական և թե ներհիվանդանոցային վարակների կանխարգելման առումով:

Ուշագրավ է նաև գործնականորեն կարևոր լաբորատոր ցուցանիշների, մանսավորապես, լեյկոցիտների քանակի, Ց ռեակտիվ սպիտակուցի, ԷՆԱ-ի և

կրծքավանդակի ռենտգենաբանական հետազոտության վերլուծությունը և համեմատությունն ՌՍՎ/ԳՎ դրական և բացասական, ինչպես նաև թոքաբորբով և առանց թոքաբորբի երեխաների խմբերում: Հեղինակը պարզել է, որ այդ ցուցանիշները չտարբերվելով նշված խմբերում, հետևաբար, և չեն հանդիսացել մանրէային վարակի ցուցիչ, բացատրելով դա թոքաբորբերի վիրուսային ծագումով: Մա նույնպես ունի գործնական կարևոր նշանակություն, մեկ անգամ ևս հիմնավորելով վիրուսային վարակների դեպքում հակաբիոտիկների օգտագործման հակացուցումը, հատկապես նրանց հանդեպ կայունություն առաջացնելու կանխման առումով:

Հաշվի առնելով ստացված արդյունքները, աստենախոսը առաջարկում է զարգացող երկրներում, ինչպիսին Հայաստանն է, որտեղ ՊՇՌ հետազոտությունը դժվարամատչելի և ծախսատար է, մանկական բուժօգնություններում ներդնել հակածին հայտնաբերող արագ թեստերը, մասնավորապես ՌՍՎ և ԳՎ հարուցիչների հետազոտման նպատակով, իսկ դրանց հաստատման դեպքում զերծ մնալ ոչ անհրաժեշտ լաբորատոր (ծայրամասային արյան քննություն, ԷՆԱ-ի եւ ՑՌՄ-ի որոշում) և գործիքային (կրծքավանդակի ռենտգենաբանական քննություն) հետազոտություններից:

Այսպիսով, կատարած աշխատանքը հատկապես կարևոր է այն առումով, որ առաջարկված արագ թեստերի կիրառումը կօգնի ՄՇՎ-ի պատճառական ճշգրիտ ախտորոշմանը, կնպաստի լաբորատոր և գործիքային հետազոտությունների նվազեցմանը, բացի այդ կթիրախավորվի և կկրճատվի դեղամիջոցների /հատկապես հակաբիոտիկների/ կիրառումը, ինչպես նաև կնպաստի ներհիվանդանոցային վիրուսային վարակի կանխարգելմանը:

Ատենախոսությունն ավարտվում է արդյունքների քննարկումով, որտեղ ամփոփված է նյութը և հիմնավորված են ստացված տվյալները: Եզրակացություններն ամբողջությամբ արտացոլում են աշխատանքի հիմնական դրույթները:

Սկզբունքային դիտողություններ չկան, սակայն կան որոշ ցանկություններ, որոնք չեն նվազեցնում աշխատանքի անկասկած արժանիքները՝

1. Թեզի ներածությունում կամ գրականության ակնարկում, ավելորդ չէր լինի հակիրճ ներկայացնել նաև ՀՀ որպես ռազմավարական ծրագիր 2003թ գործող Մանկական Հիվանդությունների Ինտեգրացված Վարման (ՄՀԻՎ) ծրագրի տվյալ մասնաբաժնին վերաբերվող փորձը, մասնավանդ որ, այն մի քանի առումով համահունչ է տվյալ աշխատանքի արդյունքների հետ:

2. Գործնական առաջարկներում, ցանկալի կլիներ ՌՍՎ հայտնաբերման դեպքում, հիմնվելով ստացված տվյալների վրա, ավելի հստակեցնել բրոնխոբաստրուկտիվ համախտանիշի (բրոնխիտի) և թոքաբորբի կլինիկա-ռենտգենաբանական ախտորոշման մոտեցումները և վարման տարբերակումը, մասնավորապես, կրծքի հասակի երեխաների շրջանում:

Ամփոփելով, կարծում եմ, որ Հրաչուհի Ալբերտի Ղազարյանի «Ռեսպիրատոր սինցիտիալ և գրիպի վիրուսների կլինիկական նշանակությունը շնչական վարակի կապակցությամբ հոսպիտալացված մինչև 5 տարեկան երեխաների շրջանում»

Թեմայով ատենախոսությունը, ավարտուն հետազոտական աշխատանք է, որի արդյունքները պարունակում են մի շարք նոր դրույթներ, որոնք ունեն գիտական և գործնական նշանակություն: Աշխատանքը համապատասխանում է ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսությանը ներկայացվող պահանջներին, իսկ ատենախոսը արժանի է բժշկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը ԺԴ.00.06 «Մանկաբուժություն» մասնագիտությամբ:

Պաշտոնական ընդդիմախոս՝

ԵՊԲՀ մանկաբուժության N2 ամբիոնի պրոֆեսոր, բ.գ.դ.,

«Արարկիր» ԲԿ-ԵԴԱԻ գաստրոէնտերոլոգիական ծառայության և

Պարբերական Հիվանդության Հանրապետական Մանկական Կենտրոնի ղեկավար՝

Գ. Գ. Ամարյան

Գ. Գ. Ամարյանի ստորագրությունը հաստատում եմ՝

Գիտքարտուղար

բ.գ.դ., պրոֆեսոր Տ. Գ. Ավագյան

21.01.2021 թ.



6/2